ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2021 թվականի N 248-Ա

ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 20.03.2019թ. վճիռը, սեփականության իրավունքի N 07122017-06-0036 վկայականը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

«Թումանյանի ճանապարհաշինարարական շահագործման ձեռնարկություն» ԲԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող, Լոռու մարզ, համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, փողոց 28, N 6/3 հասցեում գտնվող /ծածկագիր՝ 06-060-0224-0008/ գույքը վերաբաժանել և տրամադրել փոստային հասցեներ.

1. 0.97045 հա մակերեսով գույքին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, փողոց 28, N 6/3 փոստային հասցե:
2. 0.00797 հա մակերեսով գույքին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, փողոց 28, N 6/4 փոստային հասցե:
3. 0.0002 հա մակերեսով գույքին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, փողոց 28, N 6/5 փոստային հասցե:
4. 0.02041 հա մակերեսով գույքին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, փողոց 28, N 6/6 փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. հուլիսի 21
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2021 թվականի N 249-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՄԱՍԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 07.07.2021թ. N 221-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 16072021-06-0037 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Արմեն Ֆրունզեյի Երզնկյանն ընդունել է ավտոտնակի մասը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 1/17-26/2 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 07.07.2021թ. N 221-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 2.2 քմ արտաքին մակերեսով (1.4 քմ ներքին մակերեսով) ավտոտնակի մասը՝ 2262 (երկու հազար երկու հարյուր վաթսուներկու) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.000224 հա մակերեսով հողամասը՝ 1774 (հազար յոթ հարյուր յոթանասունչորս) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Արմեն Ֆրունզեյի Երզնկյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի մասի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. հուլիսի 21
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2021 թվականի N 250-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 10-րդ հոդվածի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման 26-րդ կետի 2-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 09.08.2007թ. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» N 1032-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով և հիմք ընդունելով Սուսաննա Արշակի Աբովյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 23072012-06-0184 վկայականը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Գայի փողոց, N 40 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 06-002-0150-0015), 0.004 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես հասարակական կառուցապատման նշանակության:
2. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալու g հետո այն ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվ առման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:
3. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Գայի փողոց, N 40 հասցեում գտնվող հողամասին, վերահասցեավորման նպատակով, տրամադրել համայնք Ալավերդի,

քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, Գայի փողոց, N 40 փոստային հասցե:

4. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. հուլիսի 21
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒԼԻՍԻ 2021 թվականի N 251-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 25.06.2021թ. N 208-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 16072021-06-0026 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Սարգիս Գևորգի Կիրակոսյանն ընդունել է ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ջրավազան փողոց, N 76/2 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 25.06.2021թ. N 208-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 28.0 քմ արտաքին մակերեսով (22.0 քմ ներքին մակերեսով) ավտոտնակը՝ 39816 (երեսունինը հազար ութ հարյուր տասնվեց) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.0028 հա մակերեսով հողամասը՝ 52576 (հիսուներկու հազար հինգ հարյուր յոթանասունվեց) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Սարգիս Գևորգի Կիրակոսյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. հուլիսի 22
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈՒԼԻՍԻ 2021 թվականի N 252-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով ***որոշում եմ՝***

Գումարել Ալավերդի համայնքի ավագանու հերթական նիստ՝ 2021 թվականի հուլիսի 29-ին, ժամը 16.00-ին, համայնքապետարանի վարչական շենքում՝ հետևյալ օրակարգով.

1. Ալավերդի համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 29-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

2. Ալավերդի համայնքի 2021 թվականի բյուջեի մեջ փոփոխություններ կատարելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու, Ալավերդի համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 25-ի N 13-Ա, 2021 թվականի ապրիլի 21-ի N 40-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու, Ալավերդի համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 25-ի N 14-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Ակներ թաղամասում գտնվող հողերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու, Ալավերդի համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 21-ի N 41-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

(Զեկ. Ս. Խեչումյան)

7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի վարչական սահմաններում գտնվող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

8. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի վարչական սահմաններում գտնվող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

9. Հայաստանի Հանրապետության Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ԼՖ ծրագրին մասնակցելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

10. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/16-1/11 հասցեում գտնվող հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

11. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ քաղաք Ալավերդի, Սպանդարյան փողոց, N 9- 5/1 հասցեում գտնվող հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

12. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի քաղաքի Սանահին թաղամասում գտնվող 5,0 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելուն հավանություն տալու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

13. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ քաղաք Ալավերդի , Թումանյան փողոց, N 75/5 հասցեում գտնվող հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

14. Ալավերդի համայնքի Հայաստանի Հանրապետության գանձապետական համակարգում առանձնացված արտաբյուջետային հաշիվ բացելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. հուլիսի 23
ք. Ալավերդի